

# ԱՒԱՐԱՅՐԻ ԱՆՊԱՐՏԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

## ԹԻՒ 2

Միթե հսկայ Աւարայրի դաշտ մը չէ՞ նաեւ Սփիւռֆը, ուր հայութեան և հայկականութեան գոյամարտը կը շարունակուի: Աւարայրի ճակատամարտը եղաւ հաւատփի՛՜ վկայարան մը, ու վկայութենէ ետքը դարձաւ *ներշնչարան հաւատփի*: Քաջն Վարդանի նահատակութեամբ, Աւարայրի ճակատամարտը չէ վերջացած, որովհետեւ իւրաքանչիւր հայ, Աւարայր մը ունի իր հոգւոյն մէջ, ուր կը մղուի յարածամ պայքար մը ճշմարտութեան, սուտի ու կեղծիքի դէմ: 15 դարերէ ի վեր կը կրկնուի Վարդանանց ճակատամարտը, որովհետեւ Վարդանանցը դարձած է չայոց կեանքին մշտնջենական պատմութիւնը: Այդ դիւցազնութիւնը՝ իր ժխտական (պարտութեան) արտաքին ձեւին մէջ, ապահովեց *դրաւյա՛ն* արդիւնք մը չայ ինքնագիտակցութեան համար: Վարդանանց պայքարամարտը՝ համայն քրիստոնէական պատմութեան մէջ, հեթանոսութեան դէմ ուղղուած առաջին պատերազմն է:

Վարդանանցը պարզ արկածախնդրական պատերազմ մը չէր հայոց կողմէ ընդդէմ Մասանեան Պարսկաստանի: Աւարայրի ճակատամարտը և 1036 հայ նահատակները, հաւատփի և հայրենիքի ազատութեան գերագոյն *սկզբու նք* մը կերտեցին: Աւարայրի նահատակները և Ս. Մաշտոցի աշակերտները Բանդակեցին չայ հոգիին մէջ "Մարդկային Իրաւանց" օրէնքը 451-ին, մինչ Բաղաբակը կարծուած Արեւմուտքը "Մարդկային Իրաւանց"ը պաշտպանեց 1945-ին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ. Ա. Կ.)-ի հիմնադրութեամբ: Վարդանանց նահատակութիւնը, այնուհետեւ, դարձաւ պարծանքն ու յաւիտենականացումը հայ ժողովուրդին:

Վարդանանց և Թարգմանչաց նահատակացի ոգեկոչումները մեզ կը ներշնչեն ազգակրօն հպարտանքով: Ինչո՞ւ, որովհետեւ այդ անձնագործութիւնը միայն *դէպք* մը, *դիւցազնութիւն* մը կամ սրբազան *պատերազմ* մը չէր, այլ նաեւ երկնապարգեւ **ՊԱՏԳԱՍ** մը, կարգախօս մը և կտակ մը չայ ապագայ (ներկայ) սերունդին: Ի՞նչ է Վարդանանցի անլռելի պատգամը, որ կը դողանջէ 15 խուլ դարերէ ի վեր:

Նախ Բան ուսումնասիրելու Վարդանանցի պատգամը, սեւեռենք մեր հայեացքը հայ նախարարներուն: Չաճապարենք վճռել թէ հա՞րկ էր Աւարայրի արկածախնդրութիւնը թէ ոչ: Միթե ակելի նպաստաւոր չէ՞ր ըլլար եթէ հետեւէինք մարզպան Վասակի դիւանագիտական *բանակցութեան* և հայ ազգը վերադառնար գրադաշտական կրօնի ու ապահովուէր չայ պետականութիւնը:

20-րդ դարու նիւթապաշտ հասարակութեան և բարոյական արժէքներու անտարբեր դարու մէջ, "ազատագրուած" (սանձակոտոր) մարդը հպարտ է իր գիտական գրոհներով, հոգ չէ թէ իր եսապաշտ ասպատակումները

կ'ապականեն օդն ու ջուրը և կը թունաւորեն հացահատիկ բաշխող հողին կենսունակութիւնը: Նոյն սառն նկատումներով, նոր սերունդը, կ'ուզէ դիտել նաեւ մեր անցեալի ստոյգ դէպքերը: Մարդիկ այսօր վարժուած են որոշ կաղապարներով (տաանց հաւատքի սպառազինութեամբ) տեսնել դէպքերն ու իրականութիւնները, ո՛չ որպէսզի թափանցեն դէպքերու ճշմարտութեան և իսկութեան, այլ *նորոյթ* մը ըսած ըլլալու համար՝ համբաւ ու փառք դիզելու համար: Նիւթապաշտական աշխարհայեցողութիւնը թշնամական դիրք բռնած է քրիստոնէութեան դէմ: Երկիրն ու երկնայինը, նիւթն ու նիւթեղէնը, իմանալին և պաշտելին միացնող թելը հաւատքի՝ և սիրոյ խորհրդապաշտութիւնն է, "*խորհուրդ խորին*"ի Մարդեղութիւնը:

Վասակ Միւնի, պատանի հասակին, ապրած էր Մասսանեան պետութեան արհուսիքը որպէս պատանդ: Հօրը մահէն յետոյ ան վերադարձաւ հայրենիք, տապալեց հօրերըսօր Վարդինակի իշխանութիւնը և դարձաւ Միւնիքի քաջ իշխանը: 420 թուականներուն ան աջակցեցաւ Մեսրոպ Մաշտոցին ու հիմնեց դպրոցներ լուսաւորութիւն տարածելու համար: Ծահելով պարսիկ արհուսիքին վստահութիւնը, 440-ին Վասակ կը կարգուի Հայոց մարզպան: 451 թուականին ազգային ազատագրական պատերազմին տխուր դէր կատարելով, *դաւաճան* և *ուրացող* կը հռչակուի:

Զափազանց դժուար է մեզի համար, հայ իշխանի մը դատաստանը տեսնել ու գայն կոչել դաւաճան և ուրացող: Զենք ալ կրնար, նաեւ, զինք կոչել անսակարկ ու անշահախնդիր հայրենասէր մը:

Ինչո՞ւ:

1500 տարի վերջ առանց անձնապէս ճանչնալու Վասակ մարզպանը կրնանք առանց դատավճիռի միայն եզրակացնել, գրաւոր արձանագրութենէն, թէ ան զոհը եղած է իր տատամտոս, փառամոլ և ջուարած մտավախութեան: Երբ սերտենք պատմութեան էջերը հոն պիտի տեսնենք իր վարանումները և երկրորդութիւնները (նիւթապաշտութիւնը):

Հայ նախարարները իրենց կեղծ ուրացութենէն երբ վերադարձան Հայաստան, Վասակի ներհակընդդէմ ընթացքը պառակտում յառաջ բերաւ հայ նախարարներու միջեւ: Կ'ուզենք պաշտպանել Վասակը սակայն Հայաստանի մարզպանին երկիմաստ և ֆողարկուած գործունէութեան ընթացքը կը ստիպէ մեզ, որ մե՛նք ալ չի վստահինք իրեն: Ինչո՞ւ:

Առերես ուրացող Հայ նախարարները երբ կը հասնին Ծաղկոտնի դաշտը, հոն կը սպասեն 25 օր: Կիրակի Յուլիս 2-ին Մոզպետը կը փորձէ Անգղի եկեղեցւոյ վրայ յարձակում մը կատարել: Ղեւնդ երէց, իր օգնականներով և հետեւորդներով պաշտպան կը կանգնի քրիստոնէական հաւատքին ու սուրբ եկեղեցիին: Հայ հաւատացեալներ փայտերով ու քարերով ետ կը մղեն մոզպետն ու գրադաշտական մոզերը: Մոզպետը կը մտածէ ետ կենալ հայերը կրօնափոխ ընելու ձեռնարկէն ու կը հրաւիրէ Վասակ մարզպանը խորհրդակցութեան ըսելով, որ անկարելի կը գտնէ հայերը

կրօնափոխ ընել:

Վասակ փոխանակ ընդառաջ երթալու մոգպետին իմաստուն խորհուրդին, կը քաջալերէ զքաղաքացւոյն կրօնաւորները ու կը խոստանայ իր սեփական Միւնեաց գունդը բերել օգնելու համար մոգպետին: Սոյն քաջալերութեան պատճառաւ զքաղաքացւոյն կրօնաւորները կը սկսին կրակապաշտութիւնը հաստատել Հայաստանի մէջ--կարդալ "Ազգապատում" էջ 355-363:

Վերոյիշեալ ընդհարումները և Վասակ մարգպանին երկդիմի ընթացքը խոր պառակտումի ջարժում մը ստեղծած էր Հայ նախարարներու միջեւ: Պառակտումը տեղի պիտի տար նաեւ թերահաւատութեան: Այս ճակատագրական պահուն Վարդան Մամիկոնեան կ'որոշէ հեռանալ Արեւելեան Հայաստանէն ու հաստատուիլ Արեւմտեան Յունա-Հայաստան: Վասակ մարգպանի պառակտիչ քաղաքականութիւնը, հատուածական ջանքերէ մղուած, պառակտումի առաջնորդած էր Հայ նախարարական ժողովը: Հաւանական է, որ Վարդան Մամիկոնեան, կարգ մը նախարարներու անմիտ ու անջան պառակտումներու պատճառաւ, նախամեծար համարեց հեռանալ երկրէն, քան թէ պառակտումն ու ատելութիւնը դառնան ազգային նկարագիր:

*«Անդրի եկեղեցւոյն պատահարը և Վասակի բռնած երկդիմի ընթացքը, վատ տպաւորութիւն գործեց ընդհանրապէս, և գլխաւորապէս Վարդան յուսարեկ վիճակ մը ստացաւ, թէ ընդդիմութիւնը պիտի չիրականանայ, ուստի գլուխն առնելու ու պարսկական Հայաստանէն հեռանալու որոշումը տուաւ»* --Օրմանեան Պատրիարք:

«Մամիկոնեան սպարապետին հեռանալը, Վասակի ալ աղէկ չեկաւ, մանաւանդ որ իրեն պատճառով տեղի կ'ունենար հեռացումը, ուստի ջուտով մօտը հրաւիրեց եպիսկոպոսներէն և նախարարներէն քանի մը գլխաւորներ, իրեն քրիստոնէական հաւատարմութիւնը կրկնեց, և անմիջապէս նամակ մը գրեց Վարդանի, և *Անեսարան մըն ալ բերել տալով երդմամբ կնճեց և ուրիշներուն ալ կնճել տուաւ,* և պատգամաւորութիւն մը հանեց Վարդանի ետեւէն, որ զայն ետ դարձնեն: Վասակի գիրն ու *երդմանը*, Ղեւոնդի և պատգամաւորներուն խօսքերը զօրաւոր եղան Վարդանը իր միտէն կասեցնելու, և զինք ետ դարձնելու, այն վստահութեամբ, թէ *ընդդիմութեան գործը իրապէս և ու ժեղապէս ձեռք պիտի առնուի»* -- "Ազգապատում" էջ 363:

Վարդան Մամիկոնեանի վերադառնալէն յետոյ պատերազմ ծագեցաւ պարսիկներու և աղուաններու միջեւ ու Վասակ որպէս Հայաստանի մարգպան, Վարդան սպարապետը աղուաններուն դրկեց որպէսզի հայաստանէն հեռացնէ Վարդանը ու զայն վտանգի ենթարկէ: Այս ռազմավարութեամբ Հայոց խնդիրը ամբողջութեամբ իր տրամադրութեան ներքեւ կը մնար:

Վասակ իբր թէ քրիստոնէութեան պաշտպան ըլլար, սուտ լուրեր սկսաւ տարածել, թէ պարսիկ «Արքայից արքան գրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի», թէ մինչեւ հիմա եղած ըննդիմութեանց և մոգերու սպանութեանց ներում շնորհուած է, միայն թէ հայեր հպատակութիւն յայտնեն և Վարդանի

կազմակերպած ապստամբությունն հրաժարին: Քանի մը Բահաններ ալ գտած էր (Ջանգակ Միւնի, Մահակ Ջայնող և Պետրոս Երկաթի), որոնք միացած էին իրեն: Քահանաներէն զատ Վասակ աւելի մեծ յաջողութիւն ունեցաւ նախարարներուն վրայ: Վասակ իր խորամանկութեամբ և կարգ մը նախարարներու երկչոտութիւնն ու փառասիրութիւնը օգտագործելով, զանոնք իր կողմը շահեցաւ: Վասակ իր խորամանկութեան վրայ յաւելեալ ըլլալով գործեց աններելի վատութիւն մը եւս: Մամիկոնեաններէն, Կամսարականներէն և ուխտապահներէն նախարարագուն պատանիներ և տղաներ կեղծաւորութեամբ Միւնեաց նահանգը հաւաքեց, որ յետոյ ամէնքը մէկտեղ իբրեւ պատանդներ Պարսկաստան դրկէ: Այս բոլորը տեղի ունեցաւ երբ Վարդան Աղուաններու արջաւանքին գացած էր:

Հայոց Կաթողիկոսն ու եպիսկոպոսները խնդրանք ներկայացուցին Մարկիանոս նոր կայսրին, որ օգնէ իրենց և մասնակցի Քրիստոսի հաւատքի պաշտպանութեան: Բիւզանդիոնի կայսրը ոչ միայն զլացաւ օգնութիւն դրկել Հայաստան, այլ Փլորենտիոս Ասորին Տիգրոն դրկեց, Յազկերտը վստահեցընելու թէ ինքը հայերուն պիտի չօգնէ... :

Արդեօք մինչեւ ե՞րբ հայեր պիտի վստահին ուրիշ պետութիւններու օգնութեան: Հաւատա՛նք ու վստահի՛նք Աստուծոյ ու միասնաբար, առանց երկպառակութեան և *կուսակցական շահերու*, հաւատարիմ ըլլանք հայրենիքի կառավարութեան:

Վարդան իր սպարապետութեան ջրջանին դիւանագիտական միջոցները չ'անտեսեց երբեք: Հայերուն ձեռքը գերի ինկած Պարսիկ նշանաւոր և քիչ թէ շատ վստահելի հրամանատար մը ազատելով, և նախարարական գումարման առջեւ հանելով, անոր մանրամասնօրէն իմացուց, թէ Յազկերտի կրօնական ձեռնարկը որչափ վնասներ պիտի հասցնէ պետական գանձին և պարսկական կառավարութեան, թէ ինչպէս հայոց մարզպան Վասակ սխալ տեղեկութիւններ դրկած է Տիգրոն: Այս պարսիկ հրամանատարը անձամբ ներկայանալով Յազկերտին, մանրամասնօրէն իմացուց եղելութիւնները: Նոյն ատեն Հայաստանէն հասնող լուրերն ալ անոր ըսածները հաստատեցին:

Յազկերտ ցնցուեցաւ, և սկսաւ զինքը խաբողները մեղադրել: Արժունի խորհրդականներ ալ գտնուեցան, որոնք բռնութիւն չընելու կողմը խօսեցան թագաւորին: Մակայն Վասակ չէր դադրած իր ուզած կերպով լուրեր հասցնել Յազկերտի և Միհրնէրսէհի, աւետելով իր յաջողութիւնները: Վասակ մարզպան Յունաց կողմին վրայ ալ ազդեցութիւն գործելու համար, Յունահայաստանի սպարապետ Վասակ Մամիկոնեանի հետ յարաբերութիւն հաստատեց, և բանակցութիւնները գեղեցիկ գոյներով ներկայացուց անոր, ինքզինքն ալ իբր քրիստոնէութեան պաշտպան ցոյց տալով:

Պատերազմի դաշտին վրայ Հայոց կողմէն 287 մարդ և 9 զօրավար ինկան, իսկ Պարսից կողմէն 3544 մարդ և 9 զօրավար ինկած ըլլալը բաւական է ցոյց տալու, թէ ի՛նչ ուժգնութեամբ յարձակած են հայերը, ու ինչպէս

շփոթած ու խառնակած են պարսիկներուն գիծերը: Եղիշէ կը մանրամասնէ պատերազմի դաշտին վրայ ինկողներուն թիւը, իւրաքանչիւր նահատակուող զօրավարին անունովը: Մակայն հայերը, Վարդանի մահէն յետոյ պարտաւոր-ւեցան ցրուիլ և սփռուիլ, ու պարսիկներ հետապնդելով հալածեցին զանոնք, և ետեւնէն հասնելով կամ թափառոցներէն հանելով, սրակոտոր ըրին կամ փիղերով կոխկրտեցին բոլոր գերի բռնուողները, ընդամենը 740 հոգի եւս ըստ Եղիշէի, կամ 750 եւս ըստ Փարպեցիի, որով Վարդանանց նահատակաց համագումարը միայն մէկ թիւով տարբերած կ'ըլլայ երկու պատմագիրներու միջեւ, 1036 կամ 1035:

1500 տարի առաջ տեղի ունեցած դէպքի մը այս ջնջին տարբերակը մեզ տարակուսանքի կամ կասկածի ենթարկելու չէ՝ երբ բաղդատենք 20-րդ դարու Ճոն ֆ. Զենետիի սպաննութեան հազար ու մէկ տարբերակները...: Աւարայրի ճակատամարտէն յետոյ Վասակ Սիւնի մարզպան, իբրեւ յաղթական նկատ-ւեցաւ, որովհետեւ Հայոց հրամանատարը Վարդան Մամիկոնեան ոչ եւս էր: Վասակ գործակցեցաւ Պարսիկ պետութեան հետ ու ներումի ու կրօնական ազատութեան խոստումներով անձնատուր ըլլալու կը յորդորէր հայ հաւատացեալները, սակայն այլեւս Վասակի վրայ վստահութիւնը դադարած էր:

Այս գրութեան նպատակը Վարդանանց Պատերազմը բացատրելէ աւելի հետազօտել ու թափանցել է Վասակ մարզպանի *անձնակաւորութեան*: Ինչո՞ւ, որովհետեւ մարդ արարածին իսկութեան և էութեան մէջ կայ խորհրդաւոր անձնակաւորութիւն մը: Զգացումը, էակին կամքը, այսինքն իր անձնայատուկ անձնաւորութեան շօշափելի ու տեսանելի երեւոյթը կը լրացնէ ու կ'ամբողջացնէ մարդ արարածը: Վարդանանց Պատերազմը մղուեցաւ ազգային *ինքնութիւնը*, Զրիստոնէական հաւատքը պահելու համար: Այդ պայմարա-մարտին մէջ կը տեսնենք ո՛չ միայն տեսանելի *պարտութիւն մը*, և անտեսանելի *յաղթանակ մը*, այլ Վասակի ներաշխարհին ալեկոծութիւնն ու անզուսպ *փառամոլութիւնը*: Փառամոլութիւնը եսակեդրոն է, այլամերժ ու սեփականը կը դասէ գերիվեր:

Ինչպէ՞ս:

Պատերազմէն վերջ Յովսէփ կաթողիկոս և Ղեւոնդ երէց ապաստանած էին Արտազու բերդերէն մէկուն մէջ: Երբոր բերդը պաշարուեցաւ, և մէջինները անձնատուր ըլլալու հրաւիրուեցան, կարծիքները տարբերեցան: Բակ դիմարդողներէն էր, և 700 հոգի իրեն միացան, գիշերով դուրս ելան, պաշարողները ճեղքեցին ու անցան: Մնացեալներէն 213 զինուորականներ, և Յովսէփ ու Ղեւոնդ եկեղեցականներ անձնատուր եղան, երբոր այլեւս ուտելիք չէր մնացած: Վասակի համախոհ պարսիկ զինուորները, հայ զինուորական-ները իսկոյն սրակոտոր ըրին: Եկեղեցականներուն թոյլ տուին ապրիլ, յուսալով որ ժողովուրդը համակերպելու կը յորդորեն, իսկ Յովսէփ ու Ղեւոնդ երէց սկսան խօսիլ և Վասակը մեղապարտ ցոյց տալով բողոքեցին ու դատաստան ու զեցին:

Վապոյտ լերան բերդին մէջ Ալամտոցներ կային, որոնք կը նեղէին պաշարողները: Վասակ կեղծ խոստումներու դիմեց, և երբ Արշէն երէցի գլխաւորութեամբ պատգամաւորութիւն մը բանակցելու համար դուրս ելաւ, Վասակ, Բահանան ու ընկերները ջղթայի զարնել տուաւ: Նոյն կերպերով ձերբակալուեցան եւս Արտաշատու եկեղեցականներէն՝ Սամուէլ Բահանայ և Աբրահամ սարկաւազ, որոնք Բանդած էին Արտաշատի ատրուջանը: Բասենի Թաթիկ եպիսկոպոսն ալ կալանաւորուեցաւ, և իբրեւ սաստիկ վնասակար անձ մը, անմիջապէս Վասակի խորհրուդով Խուժաստան ւախորուեցաւ:

«Անկեղծ ու համարձակ պարսկասէր Բաղաբականութիւն մը, Վասակի համար գովեստի և արդիւնքի փաստ մը եղած պիտի ըլլար, եթէ կրօնական ազատութեան մէջ ցոյց տար պարսիկ արժուներէն օգուտը: Ինչպէ՞ս արդարացնել Վասակը, երբոր նոյնիսկ մոգպետին այդ կէտի վրայ համոզուած ըլլալը տեսնելով, և այդ ուղղութիւնը պաշտպանելն ալ լսելով, ինքն հակառակը յայտնելու և հակառակը գործելու պատասխանատուութիւնը կը ստանձնէր: Վասակ իրաւամբ կը մեղադրուի, որովհետեւ որեւէ Բաղաբական տեսակէտէ օտար, *անձ նական ջահու և փառամուղ դիտումի* միայն ծառայեց, *սուտ խոստումը և սուտ երդումը* իբր միջոց գործածեց, իրեններուն դէմ անիրաւելու և բռնանալու խիղճ չըրաւ, և ոչ ալ պարսիկ արժուներէն ջահերը պաշտպանեց»--Օրմանեան պատրիարք:

Վարդանանց պատերազմը, հայ նախարարներու բանտարկութիւնը և հոգեւորականներու մարտիրոսութիւնը, որպէս ժամանակաւոր դէպք, կրնանք կոչել աննախընթաց ողբերգութիւն մըն էր: Սոյն ողբերգութիւն կարծուած եղելութիւնը դարձաւ *անպարտելի հաւատքի* խթան մը: Մտեղները յարուցանող Աստուած թող վերարծարծէ մեր հոգիները թմրած մահաբունէ դէպի լուսաւոր աստուած ճանաչումի, հաւատարմութեան և անձնազոհութեան:

Ո՛չ թէ 20-րդ դարու Հայը, Վասակին ընթացքն ու դիտումները սխալ կը տեսնէ, այլ Վասակ մարգպան, այսօր Հայ ազգի *խիղճին առջեւ* դատապարտուած է: Ծօշափելի ու տեսանելի պատմութիւնը ցոյց կու տայ մեզի, թէ կրօնապէս միացած ժողովուրդներ, ազգութիւննին ալ կորսնցուցած են, ինչ որ գերագոյն վնասը եղած է հայութեան համար: Վասակ, կրօնական ձուլման մէջ իր ազգին ոչնչանալուն վտանգը չի տեսաւ, առաւել այդ վտանգին հանդէպ *անտարբեր* մնաց ու միայն *ի՛ր անձ նական ջահը փնտռեց*: Անդին, անվեհեր Վարդան այդ սպառնալիքին հանդէպ արթուն՝ *իր կեանքն ալ զոհեց*, բայց իր կեանքին զոհողութեամբ *վտանգը հեռացուց*:

Երբ մարդ կորսնցնէ Բացարձակին (Աստուծոյ) ըմբռնումը, մարդ կը կորսնցնէ ճշմարիտին ու կեղծին, սուտին և ուղիղին իրականութիւնը: Յիսուս կը հանդուրժէ և կը բուժէ մարդկային գրեթէ բոլոր տկարութիւնները, բայց չի կրնար ներել *կեղծաւորութեան*: Զրիստոս կեղծաւորները կը կոչէ

**“Կոյրեր, օձեր, իժերո՛ւ ծնունդներ”:**

Մեծ դժբախտութիւն մը կը նկատեմ Վասակ մարգարանին կեղծաւորութիւնը, երկդիմութիւնը, նենգութիւնը և փառամոլութիւնը: Վասակ՝ հաւատացեալ քրիստոնէայ ընտանիքի մէջ ծնած ու մեծցած չի կրցաւ տէր դառնալ իր հոգեւոր ժառանգութեան: Յաւիտենականը զոհեց ժամանակաւորին ու հոգեկանը՝ նիւթականին: Խեղճ Վասակ ո՛չ թէ չի կրցաւ ազատագրել հայութիւնը պարսկական լուծէն, այլ նոյնիսկ կորսնցուց իր կեանքը ու տանջահար հոգին աւանդեց, հայրենիքէն ու իր սիրելիներէ հեռու, բանտի մը մէջ: Միայն հայ ազգը չէ՛ որ ծնած է Վասակներ: Ինչո՞ւ և ինչպէ՞ս կը կարծէք որ Թուրքի, Լիպիոյ, Եգիպտոսի, Եմէնի, Արաբիոյ և Պաղեստինի երկիրները կորսնցուցին իրենց քրիստոնէական պետականութիւնը: Ո՞ւր են այսօր Հիւսիսային Ափրիկէի ու Միջին Արեւելի քրիստոնէայ պետութիւնները: Բոլորն ալ զոհ գացած են իրենց ազգային Վասակներու *փառամոլութեան*, անձնական շահերուն և հաւատազուրկ եկեղեցականներուն: Կրկնեմ հարցումս. ո՞ւր են Ս. Օգոստինոսներու, Կիպրիանոսներու, Տէրտուլիանոսներու, Որոգինէսներու և Աթանասներու մեծահամբաւ եկեղեցիները: Ո՞ւր են Փոքր Ասիոյ զանազան ազգային եկեղեցիները՝ Պոնտացիներու, Գաղատացիներու, Եփեսացիներու ու զանազան յունախօս ազգերու՝ Ս. Բարսեղ Կեսարացիներու, Նիւսացիներու և Գրիգորներու եկեղեցիները: Բոլորն ալ կորած են ու անոնց աւերակները անգամ անհետացած: Փոքր Ասիոյ մէջ կայ մի միայն մէկ եկեղեցի, որուն դէպի երկինք բարձրացող Խաչը չէ՛ խոնարհած Զրադաշտի ատրուշանին ո՛չ ալ Իսլամ մահիկին: Այդ եկեղեցին՝ **Սուրբ Էջմիածինն** է: Այս-Սոֆիան, որ Աշխարհի մեծագոյն եկեղեցին էր, իր ժամանակին, կորսնցուցած է իր խաչը, ու անոր փոխարէն հոն կը կանգնի Իսլամ մահիկը ու մահմէտական մուէզզինը կ’երգէ “Ալլահու Ազպար”ը փոխանակ “Տէ՛ր Ողորմեայի”... :

Զրադաշտական ու անկէ յետոյ իսլամ կայսրութեան ուկեանին մէջ կղզիացած կայ ու կը *գոյատեւէ՛* Հայ եկեղեցին իր Խաչերով, շարականներով ու հաւատացեալներով: Ի՞նչ ունի հայը աւելի զօրաւոր, առաւել ուժգին ու ալ առաւել երկարամեայ բան իր փայլատակող քրիստոսի հաւատքը: Դարե՛ր շարունակ Հայ եկեղեցին յարձակում կրած է Յազկերտներէ, Իսլամներէ, Ճէնկիզ խաներէ, Լէնկթիմուրներէ, Ալփ Ասլան թուրքերէ ու նաեւ Վասակներէ, սակայն ան չէ՛ խորտակուած:

**«Այդ վէճին վրայ պիտի ջիներ իմ եկեղեցիս, և դժոխքի դռները պիտի չի յողթահարեն զայն»**--ըսաւ Յարուցեալ քրիստոս:

Կոյր զօրութիւններ, Աստուածամերժ ուժեր ու նիւթապաշտ հարստութիւններ թող չի ջլացնեն մեր աչքերը, չհմայեն մեր մտքերը ու չի կախարդեն մեր հոգիները որ մենք եւս դառնանք ազգավաճառ ուրացողներ ու կրօնավաճառ շահամոլներ: Ճանչնա՛նք մեզի աւանդուած հոգեւոր

հարստութեան արժէքները: Լսե՛նք մեզի ուղղուած ասուածականչ.

***«Եկէ՛ք Ինձի ով յոգնածներ ու բեռնաւորուածներ ու ես  
պիտի հանգստացնեմ ձեզ».*** Ասուածաբարբառ խօսքերը:

Նուիրե՛նք մեր անձերը ու նուիրուի՛նք ծառայութեան Անոր որ մեզի  
պիտի ջնորհէ յաւիտենական կեանք ու պիտի փոխադրէ մեզ ժամանակաւորէն  
դէպի անժամանցելին: Զրիստոսի հետեւելու պայմանը.

***«Եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ՝ թող ուրանայ իր  
անձը, թող իր խաչը առնէ և իմ ետեւէս գայ. որով-  
հետեւ ով որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ  
զայն. իսկ ով որ կորսնցնէ իր անձը Անեաօրանի՛ն  
համար՝ պիտի փրկէ զայն»***--Մատթ. ԺԶ.24:

Վասակ չ'ապրեցաւ միայն 5-րդ դարուն: Այսօր ալ կան բազմաթիւ  
Վասակներ՝ հարուստ, յարգուած ու մեծարուած: Ներկայ Վասակներն ալ կը  
խոստանան մեզի, նման իրենց տիրոջ՝ Սատանային, ու կ'ըսեն. *«Այս քուրորդ  
մեզի պիտի տամ, եթէ... գետին իյնալով երկրպագես ինձի»:* Ի՞նչ է  
հու պատասխանդ: Անցնի՞լ Վասակին ջարհը ու մեռնիլ անպատուութեան մէջ  
որպէս դաւաճա՞ն, թէ հետեւիլ ուխտապահ նահատակներուն և արժանանալ  
փառքի ու յաւիտենական երանութեան:

**Դեկտեմբեր 7, 1995**  
**Թորոնթօ**

## **Ի՞ՆՉ ԿԸ ՆՃԱՆԱԿԷ ԵՐԲ ԸՍԵՆՔ. "ՍԵՆՔ ՉԱՅ ԵՆՔ"**

Ի՞նչ կը նշանակէ երբ մէկը ըսէ. «Ես Հայ եմ, Հրեայ, Ֆրանսացի կամ  
Արաբ եմ», առանց յենելու իր անցեալին, պատմութեան կամ կրօնքին: Առանց  
ենթահողի՝ աճումը պայմանաւորող միջավայրի և հաւատքի, մարդկային

կեանքի գիտակցութիւնը դատարկութիւն է, յուսահատութիւն և ցնթաբանութիւն: Օրինակ: Ի՞նչ ըսել կ'ուզենք մեր ոչ-չայ բարեկամներուն երբ անոնց իմացնենք թէ մենք չայ ենք:

Արթէ մենք գիտե՞նք մեր հայրութեան ո՛վ և ի՞նչ ըլլալը: Հայրութեան մեծ սուկոսը իրենք գիրենք կը ներկայացնեն ուրիշներու, որպէս Թուրք ջարդարարներէ ազատուած բեկորներ: Կը գրենք, կը ճառենք ու կը ծանօթացնենք մեր շուրջիներուն, ընդհանրապէս, Մեծ եղեռնի դէպքի տառապանքները՝ Մուսա Տաղի Զառասուն Օրերը, Տէր Զօրը, և ինչպէս անկէ շատ առաջ Զուղայեցի Հայերու ախորժու կոտորածը դէպի Իրան. Շահ Աքբասի բռնագաղթը Զուղայեցի հայերուն եւլն:

Զե՛ք կարծեք միթէ մեր վերոյիջեալ ժխտական պատկերացումները և բաշած հալածանքները կրնան հակադիր արդիւնք ունենալ: Մեզ մտիկ ընողները, իրենց մտքին մէջ կրնան լռելեայն մտածել թէ, այս Հայ ժողովուրդը արժանի եղած ըլլալու է այդ չարչարանքներուն: Ինչո՞ւ չի ներկայացնել Հայը **դրակա՛ն** կերպով:

Աշխարհի մեծ պետութիւններ պատերազմած են, Հայերն ալ պատերազմած են: Ուրիշներ սուր ու նիզակ բարձրացուցած են, մե՛նք ալ: Մեր պատերազմներն ու սուր և նիզակ բարձրացնելը անբաղդատելիօրէն կը տարբերի ուրիշ պետութիւններու պատերազմներէն: Զրիստոնեայ կայսրութիւններ, սկսեալ Բիւզանդիոնէ մինչեւ մեր օրերը, կրուեցան ու արիւն թափեցին *ուրիշի՛ն* հողը, հարստութիւնը, հանքերը և այժմ նաֆթահորերը գրաւելու համար:

Եւրոպական ազգերը՝ Անգլիա գաղթավայրի վերածեց Հնդկաստանը, Եգիպտոսն ու Մուսանը, Ափրիկէի զանազան երկիրները, Աստրալիան ու հիւսիսային Ամերիկան: Ֆրանսան Ալճերիան, Մուրիան, Լիբանանը Ինտոչայնան և շատ մը ուրիշ կղզիներ: Նոյնը ըրին Պելճիգա, Հոլանտա, Իտալիա և Ռուսիա: Արաբ Իսլամները հիմնեցին կայսրութիւն մը Սպանիայէն մինչեւ Հնդկաստան: Օսմանեան Թուրքերը յաջողեցան հիմնել իրենց կայսրութիւնը: Վերոյիջեալ բոլոր ազգերն ալ պատերազմեցան ընչաքաղցութեան, կոտորածի, փառամոլութեան և նիւթապաշտութեան պանծացումին համար:

Հայերն ալ կրուեցան, թափեցին արիւն կորսնցուցին արտ ու արօտ, մեռան թշնամիի սուրին տակ ու պարտուեցան: Սակայն հայերս մեր պարտութիւնը փոխարկեցինք **յողթութեան**: Հայեր, ուրիշին հողը գրաւելու համար չի պատերազմեցան: Ուրիշները գերիվաճառելու համար արիւն չի թափեցին ու ո՛չ ալ ուրիշներու կիներն ու աղջիկները բռնաբարելու համար կրուեցան:

Ըստ Փաւստոս Բիւզանդի, 370-ի աջնան Ատրպատականէն Հայաստան ներխուժող պարսկական զօրաբանակը չախչախիչ կերպով պարտուած է ու Շապուհ Բ. արեւայի կանանոցը գերի կ'իյնայ Պապ Թագաւորին ձեռքը: Պապ Թագաւոր և սպարապետ Մուշեղ (Վասակ Մամիկոնեանի որդին) ասպետական

ոգի ցոյց կու տան պաշտպանելով Ճապոնի կանանոցը և վերադարձնելով գերիները: Հայերը, ուրիշին ունեցածին վրայ աչք չունեցան: Իրենք գոհ էին իրենց ունեցածովը: Հայերը կուռեցան, բարձրացուցին սուր ու նիզակ, մի միայն մէկ նպատակի համար՝ պաշտպանելու Քրիստոսի հաւատքը, Հայ այբբենագիմը, Աստուածաշունչ Մատեանը ու ընտանեկան պատիւը:

Հայը տառապեցաւ, չարչարուեցաւ ու նահատակուեցաւ, սակայն Ա. Էջմիածնայ Ճաճանչագեղ Խաչը չի փոխարկուեցաւ արիւնկզակ մահիկով մը: Այսօր Հիւսիսային Ամերիկայի խաչապաշտ կարծուած երկնակամարին վրայ գլուխ բարձրացուցած են 1000-է աւելի մզկիթներ: Հազարաւոր իսլամներ կը պահանջեն երկրի օրէնսդրութեան մէջ մտցնել բազմակնութիւնը որպէս օրէնք: Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ, այսօր կը վիստան ոչ-բնիկ օտարականներ: Գերմանիոյ մէջ կայ 3 միլիոն թուրքեր որոնք ամուսնացած են գերմանուհիներու՝ կարծեցեալ քրիստոնեաներու հետ:

Ա՛յն ազգերը որոնք գերիվարեցին օտարները, այսօր իրենց երկիրները դարձած են անապահով: Հայաստան՝ երկիր նահատակներու, բնակուած է 36 տոկոս հայ հաւատացեալներով: Որո՞նք կը կարծէք թէ են յարթական, Եւրոպակա՞ն երկիրները, թէ Հայաստան: Փաստացի է, թէ գրիչը աւելի դրական է՝ քան սուրը, գրչին, խօսքին աւելի դեր է վերապահուած՝ քան սուրին: Օջականի համեստ վանականը Ա. Մեսրոպ, շատ աւելի ազգաշէն գործ տեսաւ 36 տարեով, քան Տիգրան Մեծ, սուրով ու քանակով: Տիգրաններու յարթութիւններէն ոչինչ մնաց ժառանգութիւն:

ՄԱԿ-ի Երեւիսներու Ֆոնտը (UNICEF), որ այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 50-ամեակը, 1996-ի իր օրացոյցին որպէս կողմի գլխաւոր նկար, հրատարակած է Հայաստանի ութամեայ Լիլիա Մարկոսեանի մէկ ստեղծագործութիւնը, որ վառ գոյներով կը ներկայացնէ կրկեսի մը տեսարանը: Վեց հարիւր տարի յետոյ տառապանքի ու բնաջնջումի ընդմէջէն, հայութիւնը կը տեսնէ վարդահեղեղ արջալոյսը գիտութեան և հաւատքի զարթօնքին:

Ի՞նչ է հայրենիքի իրականութիւնը--բաղա՞ք է, ջէ՞նք է, պետութի՞ւն է, գո՞րծ է: Հայրենիքի իրականութիւնը **ոգի** է, ըմբռնում, ապրում և ծառայու-թիւն: Ոգեկան աշխարհը կը գտնուի մեր արուեստագէտներու և բաղաբա-գէտներու հասողութենէն դուրս և անդին: Ոգեկան ուժի աղբիւրը **Հայ Եկեղեցին** է՝ գործօ՞ն ու իր սրբակենցա՞ղ Եկեղեցականներով: «Եկեղեցին մեր կեանքին մէջ ապրող ոգին է, հաւատք, բարոյական հասկացողութիւն, և կեանքի ըմբռնողութիւն»: Ինչո՞ւ համար Վարդանանց, Թարգմանչաց և նահատակացի ոգեկոչումները մեզ կը ներշնչեն ազգակրօնական հպարտան-քով:

Ո՞վ դիեցուց և ապրեցուց հայը վեց հարիւր տարի առանց պետակա-նութեան: Կուսակցութիւնները, ճաշկերոյթները թէ լումայափոխ և անձնասէր ամիրաները: Հայ ժողովուրդի ստրկութեան, անօթութեան, չարչա-

րանհնչող և նահատակութեան շրջանին, մեզի հայերուս ապրեցնող, ոգի՛ ներշնչող, մխիթարող ու աշխարհաբար լեզուով մեզ միացնող ու որպէս ազգ պահող աներեր հիմնարկութիւնը եղած է **Հայ Եկեղեցին** ու անոր Աստուծոյն նուիրուած, հոգ չէ թէ անուս, բայց հաւատփ տիտա՛ն Բահանաները:

Հայ մտապատկերին համար կարելի չէ երեսակայել հասարականութիւն մը առանց եկեղեցիի, բարոյականութիւն առանց հաւատփի և մարդ՝ առանց Աստուծոյ: Հաւատա՛նք աստուածայայտ Մարդեղացեալէն Ճառագայթող Լոյսին ու անկէ բխող վերածնունդ կեանքին ու ջնորհաւորենք՝ զիրար:

Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեան կ'ըսէ.

*«Ազգերու վերակենդանութեան ճանապարհը,  
կրօնակա՛ն վերազարթօնփ՛ի ճանապարհն է»:*

**Յունուար 4, 1996**

**Թորոնթօ**

## **ԻՆՉՈ՞Ւ ԴԱՏՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԿՈՐԾԱՆԵՑԱՆ**

*--«Եւ դժոխքի (մահուան) դռները պիտի  
չի յաղթահարեն զայն»--Մատթ. ԺԶ.18:*

Ակսեալ Սողոմոն թագաւորի տաճարէն մինչեւ Հերովդեսի մարմարա- ջէն տաճարն ու բազմահազար Եկեղեցիները հիմնայատակ կործանած են կամ մզկիթի վերածուած: Ո՛րք են Անիի հազար ու մէկ եկեղեցիները, մանաւանդ

անմահ Զուարթնոց եկեղեցին: Ո՞ւր անյայտացած են Հիւսիսային Ափրիկէի մայր տաճարները, որոնք պարծանքն էին Ս. Օգոստինոսներուն, Ս. Կիպրիանոսներուն և Տէրտուլիանոսներուն: Ինչո՞ւ կործանեցան Եգիպտոսի Ս. Աթանասներու ու Ռրոզինէսներու բարձրաբերձ եկեղեցիները: Սոյն եկեղեցիներու հետե՛րն անգամ գոյութիւն չունին այսօր:

Ինչպէ՞ս ըմբռնել Յիսուս Բրիստոսի նախաձայնութիւնը, թէ *“դժոխքի (մահուան) դռները”* անկարող պիտի ըլլան յաղթահարել՝ քանզի ու կործանել Իր եկեղեցին: Ձի կա՛յ սխալմունք, թիւրիմացութիւն և ջիոթանք մեր Տիրոջ աստուածաբարբառ խօսքերու ըմբռնումի՛ն մէջ: Սակայն սխալանքն ու սայթափումը ո՛չ թէ Անոր նախատեսութեա՛ն մէջն է, այլ **մե՛ք** հասկացողութեանը մէջ:

Որպէս ճարտարապետ, Յիսուս Բրիստոս անցած է նիւթեղէնի տարածքէն դէպի հոգեւոր տարածքը: Անոր նախատեսութիւնը՝ եկեղեցւոյ կառուցումովին *կրօնիտեա*, ու մետաղեայ նիւթը չէ՛, այլ *հոգեղէնը՝* Իր հաւատացեալներու անձնուիրութեա՛ն և հաւատարմութեա՛ն անվեհեր և անպարտելի կամփի՛ն նախանիւթով Ան պիտի կառուցանէ Իր եկեղեցին:

Հաւատացեալներ բարձրանալու են աշխարհային ու ջօջափելի տեսանելի առաջններէն դէպի վեր, նայելու և տեսնելու համար այն անջօջափելի ու անպարտելի Յիսուս Փրկչին և նահատակներու լուսայորդ վկայութիւններուն ու ծառայութիւններուն, որոնցմով Ան կը կերտէ ու կը յօրինէ Իր հրաշագեղ ու պանծալի կենդանի՝ եկեղեցին:

Յանցանք կամ մեղանչում չէ երբեք մեր բարաջէն ու դէպի երկինք գալթազարդուած աղօթատուները կոչել եկեղեցի, որոնց վրայ կը ծածանին ճածանչասփիւռ Խաչեր: Սակայն ըմբռնումի շեղում է, ու մտածումի և դատողութեան թերութիւն, երբ “եկեղեցի” բառը գործածենք մի՛ միայն *բարակե՛րտ*, ու կամարաջէն աղօթավայրերու համար: Որովհետեւ:

1-ին. «եկեղեցի» բառը իր ստուգաբանական և աւետարանական իմաստով կը նշանակէ. *“Ա՛յն որ Տիրոջ կը պատկանի”*: Յուն. “էկլիզիա” բառը որ ընդհանրապէս “եկեղեցի” կը թարգմանուի, յիշուած է 112 անգամ, որուն 90 տոկոսը գործածուած է Պօղոս առաքեալի նամակագրութիւններուն մէջ:

2-րդ. Հին Կտակարանի եօթանասնից թարգմանութեան մէջ “եկեղեցի” բառը գործածուած է որպէս “հաւաքուիլ”, “ժողուուիլ”, պատերազմի, բաղաբանական, կամ կրօնական որեւէ նպատակի մը համար *մէկտեղուիլ*: Սոյն բառին իմաստէն յտուած եկած է Փարիսեցիներու *“կիւակոկ”* գործածական բառը, որ կը նշանակէ “ժողովարան”, այլ խօսքով՝ հաւաքավայր:

3-րդ. Նոր Կտակարանին մէջ “էկլիզիա” բառը գործածուած է թէ՛ աշխարհական և թէ՛ կրօնական իմաստով, որպէս հաւաքոյթ կամ ինչպէս այժմ եգիպտահայ Գալուստեան և Նուպարեան ուսանողներ կը գործածեն “հաւաք” բառը որպէս իրենց տարեկան ու խմբական մէկտեղուիլը, ոչ որպէս

մասնաշատուկ և սեփական վայրի մը կամ ուխտատեղիի մը մէջ, այլ՝ պարզապէս ժողովիչ.

4-րդ. Պօղոս առաքեալ "եկեղեցի" բառը կը գործածէ անոր կրօնական իմաստով երբ կը գրէ Թեսալոնիկեցիներու եկեղեցիին, որոնք *«ընտրուած և հաւատնաւ»* են: Ա. և Բ. Թեսալ. Ա.1 համարները:

5-րդ. Մեր Տէրը Քրիստոս երբ առաջին անգամ գործածեց "եկեղեցի" բառը, այդ բառին առջեւ դրոշմեց «Ժմ» բառը և ըսաւ.

**«Այդ վէժին վրայ պիտի շինեմ Իմ եկեղեցիս»**

**--Մատթ. ԺԶ.18:**

Ուստի Յիսուս Քրիստոսի բով հաւատնածները և ժողուուածները ոչ թէ կրանիտեայ *հարեք*, ու անկենդան *մարմարներ*, են, այլ *հաշակորով վկաներ*, ու անվեհեր *մարտիրոսներ*: Հետեւաբար եկեղեցին կը դադրի անշարժ կառոյց մը կամ ուխտատեղի մը ըլլալէ ու կը դառնայ *գործօն*, հաւատարիմ ու անձնագոհ վկայողներու՝ համաքրիստոնէական հաւատքի ու սիրոյ եղբայրութեան և համերաշխ գործակցութեան, փոխան մրցակցութեան և "ես"ի պայքարամարտութեան--Փիլիպ. Բ.5-11:

Յիսուս Քրիստոս աշխարհի վրայ երկար չ'ապրեցաւ, սակայն Իր ապրումով ու նուիրումով ապրեցուց ուրիշները: Հաւատացեալներ, վկաներ, նահատակներ ու եկեղեցի կոչուածներ եւս կ'ապրին իրենց գործերով՝ *վկայութեամբ* ու *ծառայութեամբ*: Եթէ կ'ուզենք խտացնել "եկեղեցի" բառը մէկ խօսքի մէջ, այդ բառին պէտք է տալ հետեւեալ նշանակութիւնը *«անձը ուրանայ»*. Այլ խօսքով եկեղեցին կը դադրի *անշարժ հարաչէն* կալուած մը ըլլալէ ու կը դառնայ *գործօն նեայ*, հաւատարիմ մասնիկը Յիսուս Քրիստոսի Անձնաւորութեան՝ անտեսանելի Յիսուսի, տեսանելի Մարմինը:

Սուրբ Պատարագի էական ու հոգեկան իմաստն ալ կը կայանայ միանալու Յիսուս Քրիստոսի մէջ, երբ ծնրադիր ու երկրպագական խոնարհութեամբ կը ստանանք Իր Մարմինն ու Արիւնը: Ինչո՞ւ կ'ընդունինք այդ Մրբութիւնները: Տուցադրութեա՞ն և սովորութեա՞ն համար, ո՞չ, այլ գործելու, վկայելու ու Իրե՞ն *նմանելու* համար: Դառնալու կենդանի, գործօն ու դրակա՛նօրէն արդիւնաբերողներ: Քրիստոնէայ ըլլալը (եկեղեցւոյ *հոգեւոր* անդամ) ըլլալ կ'ենթադրէ, գործօն աշակերտութիւն Յիսուս Քրիստոսի:

*Հոգեկա՛նը*, իրականութեան գործօն արտացոլացումն է, որ կ'իրագործուի Յիսուս Քրիստոսի հաւատարիմ աշակերտներու կեանքին մէջ: Պօղոս առաքեալ իր ժամանակակիցներուն բով *հանդիստօն* մը չէղաւ, այլ գործօն կրօնաւոր մը և իր հաւատքը կիրարկող մը: Հաւատքը կրնայ միայն "գիտութիւն" մը ըլլալ, իսկ "հաւա *տալը՝ գործօն արա՛յք*: Աւետարանները գրուեցան արիւնագիր վկայութեամբ ցոյց տալու համար եկեղեցիին անվեհեր (Քրիստոսի աշակերտներուն) հաւատքը և անոնց գործօն *դատօխարակչական*.

աւետարանչութիւնը:

Գործօն մարդը հողէն կեանք (հաց) կ'արտադրէր ու քարէն քանդակ (եկեղեցի): Աղօթքի և սրբութեան առջեւ բիրտ քարը կը խոնարհի ու կը դառնայ խաչքար, բայց խօսուին վկայութիւն: Յիսուս Քրիստոս կը դիմաւորէ մեզ էր կենսախրախոյս նայուածքով ու կ'ըսէ.

***«Արդեակ, յուսահատութեանդ, թերահաւատութեանդ  
և անկարեկցութեանդ գերեզմանին քարը մեկդի քրէ»:***

Մոռնալու չէ՛ թէ եկեղեցակա՛նն է, որ կը շինէ (կը կազմէ) եկեղեցին: Զարաշէն եկեղեցաշինութիւնը ապացոյցն է ա՛յն սկզբնաւորութեան, թէ հաւատացեալը ունի աստուածային գօրութիւնը առաջնորդելու համար մեղաւորը սրբութեան, այնպէս ինչպէս կոշտ քարը կը դառնայ խօսուն խաչքարի: Մեր Տիրոջ ծայրագոյն պատուերը եղաւ.

***«Գացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձուցէ՛ք թողոր ազգերը»  
--Մատթ. ԻԸ.19:***

Քրիստոսի վերջին յանձնարարութիւնը և յորդորը՝ ազգերը աշակերտ դարձնել էր ու ոչ քարաշէն եկեղեցիներ կանգնել:

Եթէ հաւատացեալներու առաջնահերթ նպատակը միայն քարաշէն եկեղեցիներ կառուցանել է, այդ եկեղեցիները կրնան հիմնայատակ կործանիլ, ինչպէս պատմական եկեղեցիները առարկայական վկաներն են այդ եղեռնին: Իսկ եթէ եկեղեցիին կոչումն ու նպատակն է ներքին, հոգեկա՛ն վերածնու-թիւնը, "Նոր արարած" դառնալու իրողութիւնը, այդ եկեղեցին (թրծուած հաւատացեալը) անկորնչելի ու անքաժանելի է Քրիստոսէ, ու դժոխքին ու մահուան դռները պիտի չի կարենան յարթահարել զայն:

Այս առթիւ կ'ուզեմ հակիրճ մեջբերումներ ընել "Գանձասար" հրատարակութեան Գ. Հանդէսէն՝ էջ 291, «Հայոց Նոր Վկաները» որ աշխատասիրած է Զնարիկ Ղազարեան:

**1. Դաւիթ խորբերդցի** կը ձերբակալուի ու բանտ կը նետուի իբր թէ անարգած է իսլամ հաւատքը: Ծողոքորդութեամբ և մերթ ալ սպառնալիքով իսլամները կը ջանան դաւանափոխ ընել զայն:

Երբ քաղաքի հրապարակին վրայ այս հէ՛ք երիտասարդը կը չարչարեն, կը թքնեն և անողորմ կերպով կը վիրաւորեն, հայրը որ քահանայ էր, կը մօտենայ ու կ'աղերսէ ըսելով.

*«Արդեակ, մի՛ երկնչիք այս չարչարաններէն, որ մի  
միայն մարմինիդ է որ կ'ազդէ ու ո՛չ հոգիիդ, այլ  
ուրախացի՛ր, որ ժառանգորդ ես յախտենական*

*կերտե՛րի և անպատում ուրախութեանն».*

Իսկ Դաւիթ կը պատասխանէ.

*«Հա՛յր իմ մի տարակրօսիչ, յոյս ու նիւմ ստանալ  
փրկութեան հանդերձ և ուրախութեան պատմութեանն».*

Անօրէնները երբ կը լսեն այս խօսքերը կրակ կը վառեն ու Դաւիթը կը նետեն կրակին մէջ, բայց սուրբը չայրիր այլ կրակը ծիրանագոյն տեսք մը կը ստանայ: Անօրէնները Դաւիթը կրակէն կը հանեն ու չարաչար սուրով կը խոցոտեն մինչեւ որ ան շնչասպառ կ'ըլլայ:

Քրիստոսի երանելի վկան Դաւիթ կը նահատակուի 1474 Յունուար 16-ին Կիրակի օրը, ի փառս մեր Տիրոջ Քրիստոսի վկայութեան:

**2. Լոյս Գրիգոր** Երեւան թաղի բնակիչներէն էր, գեղեցկատեսիլ և վայելչահասակ 18-ամեայ պատանի մը, աղքատ ծնողաց զաւակ: Զրպարտութեամբ ու սուտ վկաներու միջոցով իսլամ կրօնապետին կը տեղեկացնեն որ Գրիգոր հայհոյած է իրենց հաւատքին: Կրօնապետը կը վճռէ թէ Գրիգոր պէտք է մեռնի, կամ ընդունի իսլամ հաւատքը:

Գրիգորի սպաննութենէն առաջ Իսլամ մեծահարուստ մը կը մօտենայ ու կ'ըսէ Գրիգորին.

*«Տրդեա՛կ դու ն մանուկ ես, խնայէ՛ քու ջանիչութիւնը և  
փրկէ՛ քու անձը: Ես քեզի խանութպան կը կարգեմ  
կ'ընդունիմ քեզ որպէս իմ որդիս, կու տամ քրեմ հարկս  
թուման, պատուական ստացուածքներ և մի գեղեցիկ  
կին՝ որու ն որ դու ն կը հաճիս».*

Սակայն Քրիստոսի հաւատարիմ ծառան մերժելով նիւթական հարրստութիւնը, կը պատասխանէ.

*«Եթէ՛ դուք կը կամենամ ինձի բարիք ընել, թողէ՛ք որ  
մնամ իմ հաւատքիս մէջ: Իսկ եթէ՛ զիս սպաննել կ'ուզէ՛ք,  
դո՛ւք գիտէ՛ք».*

Ամբողջ կատաղած ու մեծաձայն աղաղակներով կը յարձակի ու մէկը սուրով կը հարուածէ անոր երեսը և ուրիշներ սուրով կը խողխողեն անոր մարմինը ու յետոյ կը քարկոծեն: Անոր գերեզմանը կը գտնուի Երեւան թաղի Մատրան կամ Ամարան եկեղեցւոյ առջեւ՝ հետեւեալ տապանաքարով.

*«Նահատակ վասն Քրիստոսի՝ որդի Աւարդի,  
Գանձ կայ՝ եղեալ աստ ի ջիրիմի».*

Միքայէլ Ծայրագոյն վարդապետ Աջապահեան:

1909 թ. Ապրիլ 14-ին սկսաւ Ատանայի շարդը: Թուրք խուժանը յարձակելով Մեսիսի վրայ, ամենէն առաջ ձերբակալեց Մեսիսի առաջնորդին՝ նպատակ ունենալով դաւանափոխ ընել զայն:

*«Այլ վախճանար ըսին անոր, Քեզի վտանգ չի սպառնար.  
միայն ուրացի՛ր կրօնե՞ր և կը փրկուիս».*

Առաջնորդը որպէս պատասխան՝ կ'աղօթէր ու կը խաչակնէր: Այդ ժամ ջարդարար գազաններէն մէկը ձեռքը բռնած կօշկակարի հերիւնը խոթեց առաջնորդին աջ աչքը և կուրացուց գայն: Սակայն առաջնորդը իր արիւնահոս դէմքին վրայ կը ջարունակէր խաչակնէլ և աղօթել: Նոյն ջարդարարը միեւնոյն հերիւնով կուրցուց նաեւ անոր ձախ աչքը: Կուրացած առաջնորդը արիւնով ծածկուած դէմքին վրայ անտրտունջ, յարատեւօրէն կը խաչակնէր ու կ'աղօթէր: Ջարդարարները, առաջնորդը անլուր խոշտանգումներու ենթարկելով, չարաչար կը սպաննեն ու այնուհետեւ անոր յօշոտուած մարմինը կը նետեն Ճիհան գետը:

Բազմաչարչար առաջնորդը, արիասիրտ Հայր, Սուրբ Հոգիով լեցուած այս քրիստոնեան, Միհայել ծայրագոյն վարդապետ Աջապահեանն էր, որ Բասնուլթ տարեկանին վկայարար նահատակուեցաւ ի փարս Զրիստոսի: Տարգանքներ այդ առաքելաջնորդի վարդապետին և անոր անյայտ գերեզմանին ու անծանօթ յիշատակներուն...:

### ***Տիջատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:***

Հաւատաւոր նահատակներ իրենց անորջիրիմեան ոգեղէն ձայնով կը խօսին մեզի մագաղաթեայ մատեաններու մէջէն: Անշունչ կը կարծուին ըլլալ մագաղաթները, բայց շունչ և ոգի՝ կու տան ընթերցողներուն: Հոգեկան ներգործութեամբ շնչաւոր են անոնք ու կը կերպաւորեն մարդոց կեանքը իրենց օրինակով, ոգիով ու դրդումով: Եկեղեցին ժողովուրդն է, իսկ եկեղեցականութիւնը՝ անոր սպասաւորութիւնը: Զրիստոս, տեսանելի Եկեղեցիին՝ մարմինն, Անտեսանելի Գլուխն է: Գործօ՛ն Եկեղեցին, Իր Տիրոջ անմար հաւատքին, ստեղծագործ ապրումին և խիզախ մաքառումներուն կենդանի՝ ու անվեհեր ներկայացուցիչն է:

Մեծ Եղեռնին երբ հայեր ախորուեցան անապատ, հոն Եկեղեցի չի կար, սակայն իրե՛նք դարձան կենդանի՝ Եկեղեցի, խորան և վկայութիւն: Զրիստոս՝ Իր համբառնալէն անմիջապէս առաջ ըսած էր Իր աշակերտներուն. **«Ինձի համար վկաներ պիտի ըլլա՛մ»:** ի վերջոյ անոնք կնեցին իրենց վկայութիւնը արիւնով ու հաւատարմութեամբ:

Ես միջոտ լաւատես մը եղած եմ, որովհետեւ Գերբնական Ջայն մը կայ, որ խարխափումի և խաւարի մէ՛ջ իսկ մեր կեանքին ուղղութիւն կու տայ: Շ. Տ. Lewis-ին *կասկածներն*, էին, որ 20-րդ դարու հաւատքի մեծագոյն ջատագովր դարձուցին զինքը: Կասկածը ինչպէ՞ս կրնայ արդիւնաբեր ըլլալ: Եթէ

չի կասկածիմք մե՛ր ու մեր շուրջիներու սխալին, սխալը կը մնայ սխալ, եթէ կասկածիմք՝ կը ստուգենք և կ'ուղղենք մեր ընթացքը:

Քսաներորդ դարու հայ հաւատացեալը հայրենիքի մէջ դիեցաւ Համայնավար աստուածամերժ դաստիարակութեամբ և Սփիւռքի մէջ սնաւ մամոնայի նիւթապաշտ հոգեքանութեամբ: Այժմու Բաղաբակրթութիւնը գիտութեան լոյսով խաւար կը ներմուծէ քրիստոնէայ ծնած հոգիներու մէջ: Հայը ազգովին, թէեւ կը պատկանի Բրիտանոսի աշակերտներու դասին, սակայն ան դարձած է ԹՈՎԱՄԱՍ մը: Տատամտոտ, անհամարձակ, կասկածանքով ջրջապատւած, ջուարած և թերահաւատ: 21-րդ դարու սեմին, Եկեղեցիին մէջ ջարու-նակ ձգտում մը պրկում մը կայ, ըլլալու *հիմնարկութիւն* մը փոխանակ **զարժման:**

Յիսուսի հերոսական նկարագիրը Անոր հերոսական յուսադրումի՛ն մէջ էր: Այս յոյսը միացած ու կցուած էր Իր դիւցազնական սիրոյն առ Աստուած հաւատին հետ: Անոր անանձնական նուիրաբերումը հանդէպ մեղաւոր մարդկութեան և Իր դիւցազնական արհամարհանքը մահուան դէմ, փրկութիւն բերաւ մարդաշխարհի: «Մէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ և զոհողութիւնը կը դիւցազնանայ»: Աչազուրկներ էին Հոմերոս, Ճան Միլթըն, Հելէն Բելլըր, որոնք մտքի լոյսին փողահարները ու ջահակիրները դարձան իրենց դիւցազներգակ և աշխարհահռչակ գրական ստեղծագործութեամբ:

Հայ հաւատացեալը իր Եկեղեցիներու փլատակներուն մէ՛ջ իսկ, կը տեսնէ իր ցեղին արմատները, դիւցազնութիւնները և աննահանջ ու լուսաճածանջ ապագան ու չի յուսահատիր, որովհետեւ անոր հաւատքը դարձած է *տեսութիւն*: Յիսուս իր հմայագեղ առակներով պատկերացուց իւրաքանչիւր ազգի ու ցեղի հայրենի հողին և բնութեան սէրը: Ան դիտեց և ուշադրութեան առարկայ դարձուց աղբատն ու հարուստը, հրեան ու հեթանոսը որոնք Բաղեցին չրէաստանի ճամբաները: Ա՛յսօր ալ Ան կը Բալէ համայն աշխարհի փողոցներէն: Անոնց մէջ կը տեսնե՞ ու կը գտնե՞ հաւատքի դիւցազներն ու հաւատարի՛մ մշակները Իր Եկեղեցիին: Յիսուս է որ կը խօսի մեր իւրաքանչիւրի խղճին:

Փետրուար 8, 2000--Թորոնթօ

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ--1

Ձի կայ ամերիկացի մը, որ չի գիտեր Աքրահամ Լինքըն անունը: Ձի կայ անգլիացի մը, որ լսած չ'ըլլայ Ուիլիեմ Ծեֆսքիրի անունը: Նոյնպէս և չի կայ հայ պատանի մը որ չէ՛ լսած **Ս. Գրիգոր Լուսաւորիչ** անունը:

Այս համեստ գրութեան նպատակը ծանօթացնել է հայ ազգին մեծարժէք լուսաւորիչը, որ իր նուիրումով, զոհողութեամբ, ու կենդանի՛ նահատա-

կութեամբ, լուսաւորեց ամբողջ ազգ մը այն սրբարար Լոյսով, որ իջած էր երկինքէն լուսաւորելու և փրկելու մարդաշխարհը:

Ո՞վ եղած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ և ի՞նչ իրագործած է իր համբերութեամբ, իր սրբակենցաղ ապրումով ու իր հերոսական հաւատով:

Հայոց լուսաւորիչը ծնունդով պարսիկ պահլաւունի մըն էր: Անակ անուն դաւաճանի մը որդին, որ սպաննած էր Տրդատ Թագաւորին հայրը՝ Խոսրով Թագաւորը: Սակայն այս մանուկը ունէր բրիստոնեայ դայեակ մը Սոփիա անունով, որ փախցուց զայն Կեսարիա: Այս բրիստոնեայ կինը, իրեն վստահուած երախան մկրտել տուաւ Կեսարիա և անուանեց զայն Գրիգոր: Պատանի Գրիգոր Կեսարիոյ մէջ ուսանեցաւ և բարեպաշտութեան մէջ զարգացաւ: Ընտրեց հետեւիլ Բրիստոսի ճամբան, քան թէ փառասիրութեան և անձնասիրութեան հեշտանքը: Փոխանակ հետեւելու իր հօր դաւաճանութեան, ան զոչաց անոր ըրածին ու վեհանձնութեամբ ու առաքինութեամբ ծառայեց Տրդատ Թագաւորին քաւելու համար իր ծնողաց մեղքը:

Տրդատ Գ. (252-330) հերքիւլեան ուժի տէր էր և նշանաւոր դարձաւ ողիմպիական խաղերու մէջ, իր յաղթանակներուն համար ան սարքած էր մեծ հանդիսութիւն մը, որու ընթացքին հրամայեց իր Գրիգոր Բարտուղարին, որ ծաղկեպսակ մը նուիրէ Անահիտ աստուածուհիին արձանին: Գրիգոր մերժեց կատարել սոյն կրապաշտական արարքը: Տրդատ Թագաւոր, Գրիգորի հարցանումներէն ընթացքին երեւան հանեց որ իր Բարտուղարը որդին էր իր հայրը սպաննող արքայանենգ դաւաճան Անակին: Տրդատ Թագաւոր այնքան բարկացաւ որ շատ չարչարաններ տալէ յետոյ, զայն նետել տուաւ Արտաշատի Վիրապի անդունդը, որ վայրի գազաններու կեր դառնայ: Սակայն. . . :

Մարմնապէս տկարացած, սակայն հոգիով դիւցազնացած Խոր Վիրապի բանտարկեալը՝ Ս. Գրիգոր լուսաւորիչ բարձրացուց Բրիստոսի լուսեղէն Խաչը որ Թաղէոս ու Բարթողիմէոս առաքեալներ բերած էին Արարատեան աջխարհ, ու այդ փրկարար Խաչեցեալին ճաճանջներով, հոգեկան և իմացական լոյս սփռեց հայու սրտերուն ու հոգիներուն: Ան դարձաւ Յիսուսի Յարութեան և յաւիտենական կեանքի ջահակիրը, որ ճառագայթած էր թափուր գերեզմանէն, հոգեսփռուած Պենտեկոստէիօրը ու լուսաւորել սկսած Հայաստան աջխարհը: Աստուած ուրիշ ծրագիր մը ունէր Գրիգոր Պահլաւունիին համար: Այն Աստուածը որ ձկնորսները առաքեալներու փոխակերպած էր, գտած էր հաւատարիմ ու անվեհեր վկայ մը, որ ունէր նուիրումը դառնալու հայ ազգին պետութեան լուսաւորիչը: 13 տարիներու դաժան բանտարկութիւնը, փոխանակ չարչարանք մը ըլլալու վկայ Գրիգորին, դարձաւ հոգեկան ու իմացական դպրութիւն մը: Խոր Վիրապին մէջ: Ան սորվեցաւ աղօթել, համբերել, վստահիլ աստուածային ողորմութեան, ու փոխանակ դառնալու վրէժխնդիր, ան դարձաւ ներողամիտ, անյիջաչար ու սիրող: Փոխանակ կեր ըլլալու վայրի գազաններու, այս սուրբը կ'ընդունէր այցելութիւնը հրեշտակներու ու տեսիլները աստուածային ծրագիրներու, որոնք կը

յայտնէին Արարչին Կամֆը:

Գրիգորի բանտարկութեան ջրջանին, Տրդատ Թագաւոր սպաննել տուած էր Հոփսիմեան կոյսերը և բազմաթիւ ուրիշ քրիստոնեաներ, որովհետեւ հայ պետութիւնը դաշնակից էր Հռոմի կայսրութեան: Տրդատ Թագաւորին հակաքրիստոնեայ ընթացքը Հռոմի հետ, զինք դարձուցած էր ոյսերիմ թջնամի հայ-քրիստոնեաներուն:

Այս ջրջանին հայ-քրիստոնեաներու կեանքը համակ, եղած էր գրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէսզի չի կորնչի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Քրիստոս: Տրդատ Թագաւոր իր գործած ոճիրներուն ու մեղքերուն պատճառով դարձաւ հոգեկան ու մտային հիւանդ, կորսնցնելով իր բանականութիւնը և յիշողութիւնը: Որովհետեւ մեղքը կը խոցէ, կը կծէ, կը չարչարէ ու կը խարազանէ յանցաւորը: Մեղաւորին խիղճը զինք կը խայթէ և կը տառապեցնէ:

Տրդատ Թագաւոր հետզհետէ խրատուելով երկնային Թագաւորէն ճշմարիտ Լոյսը սկսաւ տակաւ առ տակաւ թափանցել անոր սրտին մէջ: Ան գղջումի արցունքներով ապաշխարեց, "Անտակ Որդիի"ն ու Մողոս Փարիսեցի-հալածիչին նման: Ան գնաց Խոր Վիրապ ու մեծ զարմանքով գտաւ Գրիգոր բանտարկեալը կենդանի: Տրդատ Թագաւոր ողջագուրուեցաւ Գրիգորի հետ և ուխտեց կատարել կամֆը **ՃՃՄԱՐԻՒՄ ԱՍՏՈՒԹՈՂՆ**:

Հայոց կենդանի նահատակը՝ Գրիգոր, կարգ մը պալատականներու ընկերակցութեամբ ուղարկուեցաւ Կեսարիա: Հոն Ղեւոնդիոս Եպիսկոպոսը երբ տեսաւ ու լսեց իր Գրիգոր աշակերտին դիւցազնակա՛ն վկայութիւնը, կանչեց բոլոր եպիսկոպոսաց դասը, պարծանքով դրաւ իր աջը անոր գլխուն վրայ, ու մաղթեց եպիսկոպոսական աստիճան: Ճնորհաւորեց նախարարները ու նաեւ Տրդատ արքան: 302 թուականին, Գրիգոր Լուսաւորիչ օծուեցաւ Հայ Եկեղեցիի հովուապետ-եպիսկոպոս--Կաթողիկոս, Կեսարիայի կրօնապետ Ղեւոնդիոսի կողմէ: Իր օծումէն յետոյ, Գրիգոր Կաթողիկոս կանգնեց երեք վկայարաններ Գայիանէի, Հոփսիմէի և անոնց ընկերներուն գերեզմանին վրայ: Ս. Գրիգոր, ժողովուրդը մկրտելէ առաջ կը բացատրէր Քրիստոնէական վարդապետութիւնը բոլոր մկրտուողներուն: Ան դարձաւ մեծ նահատակ իր ճշմարիտ համբերութեամբ ու կենդանի մարտիրոս իր ճշմարիտ խոստովանութեամբ: Օտարներու աչքին եւս նոյնքան մեծ է ան որքան հայոց:

**Ոսկեբերան** կ'ըսէ. *"Մեծ խոստովանող", "մարտիրոսաց պայծառ", "երկնային զօրաց բաղաճակից", "մարմնաւոր հրեշտակ երկրի"*:

Լուսաւորչի Քրիստոնէական դաստիարակութիւնը՝ ազգային դաստիարակութիւն դարձաւ: Հայ Եկեղեցւոյ հետ կապեց հայ դպրոցի գաղափարը: Հայ հոգիի ակունքներէն ժայթքող Գրիգոր Լուսաւորչի լուսագնաց ուղիին և "Ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք" վարդապետութիւնը ստեղծագործ կեանքի վերածած է Հայ Եկեղեցին:

Ս. Գրիգոր Լուսաւորչի մեռած ատեն (325) քրիստոնէութիւնը վերջնա-

կանապէս յարթանակած էր Հայաստանի մէջ. **«Աստուած, ընտանիք,  
հայրենիք»**՝ ասոնք եղան հայ ժողովուրդի կարգախօս բառերը:

Օն, ուրեմն, հայեր, բեւեռե՛նք մեր աչքերը ի Քրիստոս, ի Տէրն մեր:  
Ազգովին մկրտուեցանք Եփրատ գետի մէջ:  
Ազգովին անցանք արեան մկրտութենէն Մեծ Եղեռնին: Ուստի,

**Հայե՛ր, արթնցէ՛ք և ուխտեցէ՛ք մնալ  
հաւատարիմ մեր հոգիներու Լուսաւորչին:**

**Ապրիլ 4, 1995  
Թորոնթօ**

189.

## **ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ԱՆՊԱՐՏԵԼԻՈՒԹԻՒՆԸ**

### **1. Աւարայրի Անպարտելիութիւնը**